(Չի գործում 2016 թվականի հունիսի 17-ից)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է	ԳՐԱՆՑՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»	ՀՀ կենտրոնական բանկում
ԻԱՄ խորհրդի	
25/02/2015թ թիվ 51-Լ որոշմամբ	«18» մարտի 2015թ
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի նախագահ	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____ Ներսես Երիցյան	_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-044

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ)

ԵՐԵՎԱՆ - 2015

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են ԱՊՊԱ ոլորտում հատուցման գործընթացում փորձագետների կողմից ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով պատճառված վնասի համար մեղավոր անձի և մեղավորության աստիճանի որոշման կանոնները:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոններում կիրառվող հասկացությունները ունեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոններում» և «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կանոններում կիրառվող իմաստը:

ԲԱԺԻՆ 2

ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

3. Փորձագետը ԱՊՊԱ պատահարի առաջացման պատճառների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տրամադրելիս պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը որոշում է՝ համաձայն սույն կանոնների:

4. Սույն կանոնների հավելված հանդիսացող գծապատկերները օգտագործվում են բացառապես կանոններում նշված իրավիճակները նկարագրելու նպատակով և որևէ սահմանափակող բնույթ չեն կրում:

5. Սույն կանոնների համաձայն մեղավորության աստիճանը որոշելիս հաշվի չեն առնվում ԱՊՊԱ պատահարի տեղի ունենալու այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝

1) եղանակային և ճանապարհային պայմանները, տեսանելիությունը և հետիոտնի գործողությունները,

2) սույն կանոններում նկարագրված հանգամանքներից բացի այլ հանգամանքներ:

6. Եթե միևնույն ԱՊՊԱ պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ կիրառելի են սույն կանոններով նկարագրվող մեկից ավելի իրավիճակներ, որոնց համաձայն դիտարկվող ավտոտրանսպորտային միջոցի վարորդի

մեղավորության աստիճանը մի դեպքում գնահատվում է 100%-ի, իսկ մյուսում՝ 0%-ի չափով, ապա նրա մեղավորության աստիճանը գնահատվում է 50%-ի չափով, յուրաքանչյուր այլ պարագաներում, երբ ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ կիրառելի են սույն կանոններով նկարագրվող մեկից ավելի իրավիճակներ, ապա դիտարկվող ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը գնահատվում է համաձայն այն իրավիճակի, որով սահմանված է վարորդի մեղավորության նվազագույն չափ:

7. Եթե պատահարը նկարագրված չէ սույն կանոնների որևէ իրավիճակով, ապա առաջացած վնասների համար դիտարկվող տրանսպորտային միջոցի ապահովագրողի պատասխանատվության աստիճանը որոշվում է ընդհանուր հիմունքներով՝ համապատասխան օրենքով, Բյուրոյի կանոններով և այլ իրավական ակտերով:

8. Երկուսից ավելի ավտոտրանսպորտային միջոցների մասնակցությամբ ապահովագրական պատահարների մասնակից ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը որոշվում է յուրաքանչյուր իրար բախված ավտոտրանսպորտային միջոցների համար առանձին՝ համաձայն սույն կանոնների, բացառությամբ սույն կանոնների 14-րդ և 17-րդ կետերի:

9. Եթե պատահարի վերաբերյալ ելակետային տվյալները բավարար չեն դիտարկվող ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ սույն կանոններով նկարագրված որևէ իրավիճակ կիրառելու համար, ապա այն պետք է որոշվի ընդհանուր հիմունքներով՝ համապատասխան օրենքով, Բյուրոյի կանոններով և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոններով:

10. Փորձագետի կողմից սույն կանոնների հիման վրա ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով պատճառված վնասի համար մեղավոր անձի և մեղավորության աստիճանի որոշման հիման վրա ապահովագրական ընկերության կամ Բյուրոյի կողմից տուժողին հատուցում վճարվելուց հետո տվյալ պատահարի գծով հարուցված գործով կայացված և ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտով համապատասխան վարորդն անմեղ ճանաչվելու կամ մեղքի աստիճանը փոխվելու դեպքում հատուցում վճարած ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) ձեռք է բերում հատուցման համապատասխան մասը տուժողից հետ ստանալու իրավունք:

ԲԱԺԻՆ 3

ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 4

ՀԱՄԸՆԹԱՑ ԵՎ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՈՎ ԵՐԹԵՎԵԿՈՂ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

11. Համընթաց և միևնույն երթևեկության գոտիով երթևեկող «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին «B» ավտոտրանսպորտային միջոցի

բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում մասնակից ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը որոշվում է հետևյալ կարգով՝

1) եթե պատահարին նախորդող պահին ավտոտրանսպորտային միջոց «A»-ն կանգի վիճակում, կամ առաջընթաց շարժման մեջ է, ապա ԱՊՊԱ պատահարում «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով (գծ. 1),

2) եթե պատահարին նախորդող պահին «A» ավտոտրանսպորտային միջոցը շրջադարձ կամ հետադարձ է կատարում, ապա ԱՊՊԱ պատահարում «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով (գծ. 1.1),

3) եթե պատահարին նախորդող պահին «A» ավտոտրանսպորտային միջոցը մուտք է գործում երթևեկության աջ կամ ձախ մասում գտնվող կայանման տեղ, ապա ԱՊՊԱ պատահարում «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով (գծ. 1.2):

12. Ավտոտրանսպորտային միջոցի՝ կայանման տեղից դուրս գալու, ճամփեզրից, կողնակից, եզրաճանապարհից կամ մերձակա տարածքից երթևեկելի մաս մուտք գործելու պահին ավտոտրանսպորտային միջոցների բախման արդյունքում առաջացած վնասների նկատմամբ մասնակից ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրողների պատասխանատվության չափը որոշվում է համաձայն սույն կետի, հետևյալ կերպ՝

1) «B» ավտոտրանսպորտային միջոցի կայանման տեղից դուրս գալու պահին, կայանման տեղի հարևանությամբ երթևեկող «A» տրանսպորտային միջոցի հետ բախման արդյունքում առաջացած վնասների համար «B» ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրողի պատասխանատվության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «A» ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրողինը՝ 0%-ի չափով (գծ. 1.3),

2) «B» տրանսպորտային միջոցի՝ ճամփեզրից, կողնակից, եզրաճանապարհից կամ մերձակա տարածքից ճանապարհի երթևեկելի մաս՝ առավելություն ընձեռող համապատասխան ճանապարհային նշանի կամ լուսացույցի ազդանշանի բացակայության պարագայում մուտք գործելու պահին, ճանապարհի երթևեկելի մասով երթևեկող «A» տրանսպորտային միջոցի հետ բախման արդյունքում առաջացած վնասների համար «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով (գծ. 1.4):

13. «B» ավտոտրանսպորտային միջոցի կողմից երկրորդական ճանապարհով անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մոտենալիս կամ մերձակա տարածքից ճանապարհ մուտք գործելիս համապատասխանաբար գլխավոր ճանապարհով կամ ճանապարհով ընթացող «A» ավտոտրանսպորտային միջոցին բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով (գծ. 1.5):

14. Համընթաց և միևնույն երթևեկության գոտիով երթևեկող հաջորդաբար իրար բախված երեք և ավելի ավտոտրանսպորտային միջոցների մասնակցությամբ պատահարի

պարագայում, պատահարի մասնակից ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը գնահատվում է հետևյալ կերպ՝

1) եթե պատահարի մասնակից բոլոր ավտոտրանսպորտային միջոցները ընթացքի մեջ են եղել (գծ. 1.6), ապա՝

ա. առաջին և երկրորդ ավտոտրանսպորտային միջոցների բախման արդյունքում առաջացած վնասների համար առաջին ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների մասով գնահատվում է 0%-ի չափով, իսկ պատահարի մասնակից այլ վարորդների մեղավորության աստիճանը բաշխվում է հավասարաչափ, երկրորդ ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների մասով գնահատվում է 50%-ի չափով, իսկ իր հետևից հաջորդաբար իրար բախված այլ վարորդների մեղավորության աստիճանը բաշխվում է հավասարաչափ, նշված վնասներից բացի տվյալ ավտոտրանսպորտային միջոցների բախման պատճառով առաջացած այլ վնասների գծով առաջին ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ պատահարի մասնակից այլ վարորդների մեղավորության աստիճանը բաշխվում է հավասարաչափ,

բ. վերջին և նախավերջին ավտոտրանսպորտային միջոցների բախման արդյունքում առաջացած վնասների համար վերջին ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների մասով և նախավերջին ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների մասով գնահատվում է 100%-ի չափով, նախավերջին ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների մասով և վերջին ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների մասով գնահատվում է 0%-ի չափով, իսկ նշված վնասներից բացի այլ վնասների մասով վերջին և նախավերջին ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը բաշխվում է հավասարաչափ,

գ. սույն ենթակետի «ա» և «բ» պարբերություններում նշված ավտոտրանսպորտային միջոցներից բացի յուրաքանչյուր երկու այլ հաջորդաբար իրար բախված ավտոտրանսպորտային միջոցների բախման արդյունքում առաջացած վնասների համար առաջին ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների մասով գնահատվում է 0%-ի չափով, իսկ իր հետևից հաջորդաբար իրար բախված այլ վարորդների մեղավորության աստիճանը բաշխվում է հավասարաչափ, երկրորդ ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների մասով գնահատվում է 50%-ի չափով, իսկ իր հետևից հաջորդաբար իրար բախված այլ վարորդների մեղավորության աստիճանը բաշխվում է հավասարաչափ, նշված ավտոտրանսպորտային միջոցների բախման պատճառով առաջացած այլ վնասների գծով նշված ավտոտրանսպորտային միջոցներից առաջինին հետևից հաջորդաբար իրար բախված այլ վարորդների մեղավորության աստիճանը բաշխվում է հավասարաչափ,

2) եթե պատահարի մասնակից ավտոտրանսպորտային միջոցներից ընթացքի մեջ է միայն վերջինը (գծ. 1.7), ապա տրանսպորտային միջոցների հաջորդաբար բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում վերջին ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՄԸՆԹԱՑ, ՍԱԿԱՅՆ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՎ ԵՐԹԵՎԵԿՈՂ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

15. Համընթաց, սակայն հարակից երթևեկության գոտիներով երթևեկող և երթևեկության գոտիները չվերադասավորող ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում մասնակից ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը որոշվում է համաձայն սույն կետի, մասնավորապես՝

1) Եթե ավտոտրանսպորտային միջոցներից երկուսն էլ պատահարի պահին հատել են, կամ գտնվել են երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի վրա, ապա ԱՊՊԱ պատահարում մասնակից վարորդների մեղավորության աստիճանը գնահատվում է 50%-ի չափով (գծ. 2),

2) Եթե պատահարի պահին ավտոտրանսպորտային միջոցների տեղակայումը երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի համեմատ հնարավոր չէ պարզել, ապա ԱՊՊԱ պատահարում մասնակից վարորդների մեղավորության աստիճանը գնահատվում է 50%-ի չափով (գծ. 2.1):

16. Համընթաց, սակայն հարակից երթևեկության գոտիներով երթևեկող և երթևեկության գոտիները վերադասավորող ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում մասնակից ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը որոշվում է համաձայն սույն կետի, մասնավորապես՝

1) «Բ» ավտոտրանսպորտային միջոցի կողմից երթևեկության գոտին փոխելու պահին «Ա» ավտոտրանսպորտային միջոցին բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «Բ» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «Ա» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով (գծ. 2.2), բացառությամբ սույն կետի այլ ենթակետերով նկարագրված դեպքերի,

2) «Ա» և «Բ» ավտոտրանսպորտային միջոցների միաժամանակյա վերադասավորման դեպքում «Ա» և «Բ» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «Ա» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «Բ» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով, եթե «Ա» ավտոտրանսպորտային միջոցը ընթանում է «Բ» ավտոտրանսպորտային միջոցի ձախից,

3) «A» ավտոտրանսպորտային միջոցի կողմից դեպի մերձական տարածք ճանապարհի լայնակի հատման կետում (երբ առկա է երկու մերձակա տարածք, բացառությամբ խաչմերուկներում) ձախ շրջադարձ կատարելու պահին «B» ավտոտրանսպորտային միջոցի կողմից «A» ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ վազանց կատարելու պահին բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 25%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 75%-ի չափով (գծ. 2.3), բացառությամբ սույն կետի 3-րդ ենթակետով նկարագրված դեպքերի,

4) «A» ավտոտրանսպորտային միջոցի կողմից դեպի միակ մերձակա տարածք ձախ շրջադարձ կատարելու պահին «B» ավտոտրանսպորտային միջոցի կողմից «A» ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ վազանց կատարելու պահին բախմամբ պայմանավորված պատահարում «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը գնահատվում է 50%-ի չափով, բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետով նկարագրված դեպքի (գծ. 2.4),

5) «A» ավտոտրանսպորտային միջոցի կողմից դեպի մերձակա տարածք ձախ շրջադարձ կատարելու պահին «B» ավտոտրանսպորտային միջոցի կողմից «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևում անշարժ վիճակում գտնվող մեկ կամ ավելի ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ վազանց կատարելու պահին բախմամբ պայմանավորված պատահարում «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով (գծ. 2.5),

17. Համընթաց, սակայն հարակից երթևեկության գոտիներով երթևեկող երեք և ավելի ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված պատահարում, երբ հնարավոր չէ հստակ որոշել իրար բախված ավտոտրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկության գոտիների վերադասավորման հերթականությունը, ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների մասով գնահատվում է 50%-ի չափով, իսկ նշված ավտոտրանսպորտային միջոցների բախման պատճառով առաջացած այլ վնասների գծով նշված ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը բաշխվում է հավասարաչափ (գծ. 2.6):

ԳԼՈՒԽ 6

ՀԱՆԴԻՊԱԿԱՑ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՎ ԵՐԹԵՎԵԿՈՂ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

18. Հանդիպակաց երթևեկության գոտիներով երթևեկող ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում մասնակից

ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը որոշվում է համաձայն սույն կետի, մասնավորապես՝

1) Եթե ավտոտրանսպորտային միջոցներից երկուսն էլ պատահարի պահին հատել են, կամ գտնվում են հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի վրա, ապա այդ ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը գնահատվում է 50%-ի չափով (գծ. 3.1),

2) Եթե ավտոտրանսպորտային միջոցների տեղակայումը հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի համեմատ պատահարի պահին հնարավոր չէ պարզել, ապա այդ ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը գնահատվում է 50%-ի չափով (գծ. 3.2),

3) «Բ» ավտոտրանսպորտային միջոցի կողմից հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի հատման պահին «Ա» ավտոտրանսպորտային միջոցին բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «Ա» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «Բ» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով (գծ. 3.3),

4) «Բ» ավտոտրանսպորտային միջոցի կողմից «Ա» ավտոտրանսպորտային միջոցի երթևեկության գոտի մուտք գործելու պահին բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «Ա» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «Բ» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով (գծ. 3.4),

5) «Բ» տրանսպորտային միջոցի՝ ավտոկայանատեղից դուրս գալու, կամ ճամփեզրից, կողնակից կամ եզրաճանապարհից ճանապարհի երթևեկելի մաս մուտք գործելու և միաժամանակ «Ա» ավտոտրանսպորտային միջոցի կողմից «Գ» ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ վազանց կատարելու պահին «Ա» և «Բ» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «Ա» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «Բ» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով (գծ. 3.5):

ԳԼՈՒԽ 7

ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՏՄԱՆ ԱՅԼ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

19. Խաչմերուկ չհամարվող երթևեկելի մասերի հատման վայրերում հատվող ճանապարհներով երթևեկող «Ա» և «Բ» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում, բացառությամբ սույն կանոնների 13-րդ կետով

նկարագրված դեպքերի, որտեղ «A» ավտոտրանսպորտային միջոցը «B» ավտոտրանսպորտային միջոցին մոտեցել է աջ կողմից, «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով

20. Չկարգավորվող խաչմերուկներում հատվող ճանապարհներով երթևեկող ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում մասնակից ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը որոշվում է համաձայն սույն կետի, մասնավորապես՝

1) «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում, որտեղ «B» ավտոտրանսպորտային միջոցը անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մոտեցել է երկրորդական ճանապարհից, «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով,

2) հավասարազոր ճանապարհների խաչմերուկում «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում, որտեղ «B» ավտոտրանսպորտային միջոցը «A» ավտոտրանսպորտային միջոցին մոտեցել է աջ կողմից, «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով:

21. Կարգավորվող խաչմերուկներում հատվող ճանապարհներով երթևեկող «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում մասնակից ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության չափը որոշվում է համաձայն սույն կետի, մասնավորապես՝

1) եթե «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդը չի ենթարկվել լուսացույցի կամ կարգավորողի ազդանշանին, ապա «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով,

2) եթե «B» ավտոտրանսպորտային միջոցը լուսացույցի կանաչ ազդանշանի դեպքում ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս բախվել է հանդիպակաց ուղղությունից ուղիղ կամ դեպի աջ ընթացող «A» ավտոտրանսպորտային միջոցին, ապա «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով,

3) եթե լուսացույցի դեղին կամ կարմիր ազդանշանի հետ միաժամանակ միացված լրացուցիչ սեկցիայի սլաքի ուղղությամբ երթևեկող «B» ավտոտրանսպորտային միջոցը բախվել է այլ ուղղությամբ երթևեկող «A» ավտոտրանսպորտային միջոցին, ապա «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով,

4) եթե «B» ավտոտրանսպորտային միջոցը բախվել է երթևեկելի մասի հատումը դեռևս չավարտած «A» ավտոտրանսպորտային միջոցին, ապա «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով,

5) եթե հնարավոր չէ որոշել, թե «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցներից որ մեկի վարորդը չի ենթարկվել լուսացույցի ազդանշանին կամ, եթե երկուսն էլ չեն ենթարկվել լուսացույցի ազդանշանին, ապա «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության աստիճանը գնահատվում է 50%-ի չափով: :

ԳԼՈՒԽ 8

ԿԱՅԱՆՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

22. Կայանման վայրերում տեղի ունեցած ԱՊՊԱ պատահարներում մասնակից ավտոտրանսպորտային միջոցների վարորդների մեղավորության չափը որոշելիս կայանման տեղի հիմնական միջանցիկ երթևեկելի մասը սույն կանոնների իմաստով դիտարկվում է որպես գլխավոր ճանապարհ, իսկ հիմնական միջանցիկ երթևեկելի մասից տարբերվող այլ երթևեկելի մասերը՝ երկրորդական ճանապարհ:

ԳԼՈՒԽ 9

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

23. «A» ավտոտրանսպորտային միջոցը կայանված վիճակում լինելու ընթացքում, «B» ավտոտրանսպորտային միջոցի կողմից «A» ավտոտրանսպորտային միջոցին բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 0%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 100%-ի չափով, բացառությամբ սույն կանոնների 24-րդ կետով նախատեսված դեպքերի:

24. Բնակավայրերից դուրս երթևեկության կանոնների խախտմամբ կայանված «A» ավտոտրանսպորտային միջոցին «B» ավտոտրանսպորտային միջոցի բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով, եթե նշված ավտոտրանսպորտային միջոցների բախումը ուղղակիորեն պայմանավորված է «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի կողմից երթևեկության կանոնների խախտմամբ կայանումով:

25. «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով նաև այն դեպքերում, երբ «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդը չի ենթարկվել՝

1) կարգավորողի հրահանգներին,

2) համապատասխան ուղղությամբ երթևեկության արգելման պահանջին,

3) վազանցի արգելման պահանջին, կամ

4) շրջադարձի կամ հետադարձի արգելման պահանջին:

26. «A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների բախմամբ պայմանավորված ԱՊՊԱ պատահարում «A» ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորության աստիճանը գնահատվում է 100%-ի չափով, իսկ «B» ավտոտրանսպորտային միջոցի վարորդինը՝ 0%-ի չափով նաև այն դեպքերում, երբ տվյալ բախումը պայմանավորված է հետևյալով՝

1) «A» ավտոտրանսպորտային միջոցը հետընթաց է կատարում,

2) «A» ավտոտրանսպորտային միջոցը շրջադարձ է կատարում, կամ

3) «A» ավտոտրանսպորտային միջոցի ուղևորը բացում է կամ բաց է թողել ավտոտրանսպորտային միջոցի դուռը (անկախ «Ճանապարհային երթեվեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքի առկայությունից):

Հավելված 1

Պատահարի պահին ավտոտրանսպորտային միջոցների փոխադարձ տեղակայման հնարավոր տարբերակներ

գծ. 1



գծ. 1.1



գծ. 1.2



գծ. 1.3



գծ. 1.4



գծ. 1.5



գծ. 1.6



գծ. 1.7



գծ. 2



գծ. 2.1



գծ. 2.2



գծ. 2.3



Գծ. 2.4



qδ. 2.5



qδ. 2.6



qδ. 3.1



q.δ. 3.2



q.δ. 3.3



q.δ. 3.4



qδ. 3.5